

## ԱՍՓՈՓՈՒՄ

Տարբեր մշակույթներում և ազգությունների մոտ ժողովրդական երաժշտությունն ունի տարբեր տեղ ու դիրք: Հայ ժողովուրդը մեծ նշանակություն է տալիս ժողովրդական երաժշտությանը հանձննա Կոմիտասի, ով ձեռնամուխ եղավ ժողովրդական երգերի հավաքման գործին: Հայերը մեծ հալածանքներ կրեցին Օսմանական կոյփերում և ստիպված արտագաղթեցին այլ երկրներ, այդ թվում նաև Իրան: Այս ինչպիսի ն է, հայկական ժողովրդական երաժշտության տեղն ու դերը նրանց շրջանում, ահա այս ինդիրին է անդրադառնում հողվածը:

Բանալի բառեր, ժողովրդական երաժշտություն, համայնք, մշակույթ, տեղ ու դիրք, ապրելակերպ, արևմտականացում, սպառողականություն (կոնսումերիզմ)

## СОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ МЕСТА И РОЛИ АРМЯНСКОЙ МУЗЫКИ В КУЛЬТУРЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ИРАНА

Мариам Сазем

Аспирант Института философии,  
социологии и права НАН РА

### РЕЗЮМЕ

Музыка имеет разное значение, место и роль у разных народов, в разных культурах. Армяне придают большое значение народной музыке, благодаря Комитасу, который поставил перед собой задачу по сбору народных песен. Армяне подверглись геноциду в Османской Империи, эмигрировали в разные страны, включая Иран. В статье автор рассматривает проблемы места и роли армянской народной музыки в общей культуре Армянской общины Ирана.

**Ключевые слова:** народная музыка, сообщество, культура, место, образ жизни, Вестернизация, потребительство.

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՍԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՏԻՎԱՑԻՈՆ  
ԱՌԱՋԱԱՀԱՑԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ

Աստղիկ Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Փիլիստիքաբուրյան. սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հակոբորդ

Ժողովրդավարական կառավարման գլխավոր առավելությունը քաղաքացիներին ընձևոված ազատությունների չնորհիվ հանրության ներուժի հնարավորինս արդյունավետ կիրառումն է, ինտիբների լրացման և հասարակական համակարգի գործացնումն նպատակով։ Ժողովրդավարության մասին ժամանակակից սրատկերացումները հանգում են ներկայացուցական(representative) գործակությանը և մասնակցային (participatory) մասնավորապես կանոնց և տղամարդկանց մասնակցության առումով ներդաշնակ սողոկների կարեռմանն ու կենսագործման անհրաժեշտությանը։

Քաղաքական և քաղաքացիական մասնակցության ընդլայնումը, քաղաքականության մշակման, որոշումների ընդունման մակարդակներում կին և տղամարդ գործիչների գուգակշոված ներկայության ապահովումը անցումային հասարակությունների քաղաքական համակարգի ժողովրդավարացման կարևոր գործուներից է։

Թեև Հայաստանում կանայք մասնագիտական, կրթական առումներով ունեն հզոր ներուժ, հետբուհական և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների, ինչպես նաև աշխատունակ բնակչության կեսից ավելին կանայք են<sup>1</sup>, այնուհանդեռձ, նրանց ներկայությունը քաղաքական որոշումների ընդունման, տեղական ինքնակառավարման, տարածքային և պետական կառավարման կենտրոնական օդակներում, կուսակցությունների ղեկավար մարմիններում հեռու է քավարար լինելուց։

Այդ խնդիրների հետազոտման առումով Հայաստանում իրականացվել են սոցիոլոգիական, քաղաքագիտական, առջականացման բնույթի մի շարք հետազոտություններ։ Ֆոկուս-խմբերի մեթոդը նման մի հետազոտություն է իրականացրել նաև «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնը

<sup>1</sup>Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքովկ: ՀՀԱՎԾ, Երևան, 2012, էջ 70: [http://www.armstat.am/file/article/gender\\_2012.pdf](http://www.armstat.am/file/article/gender_2012.pdf)

2012թ. Ազգային ժողովի բնտրությունների շեմին:

Շնուտմնափրության նպատակներից մեկը ակտիվ քաղաքական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես Ազգային ժողովի պատգամավոր դատնալու մոտիվացիայի վերհանումն էր :

Հարկ 1. նկատել, որ ամեն մի երևոյթի եղանակով չափով ամփոփված է, դրա դետերմինացիայում: Քաղաքական գործունեության հետևանքների ու արդյունքների մասին ևս ուշագրավ դատողություններ կարելի են, անել քաղաքական ընտրություններին մասնակցողների մոտիվացիայի վերլուծության, դրա վերաբերյալ դիտարկումների ու գնահատականների ուսումնափրության հիման վրա:

Մասնագիտական զրականության մեջ կան հանրային գործունեության ու քաղաքական մասնակցության դրդապատճառների դասակարգման տարբեր մոտեցումներ, այդ երևոյթի գնահատման տարրեր զգայունակրթյան սանդրականներ:

Դավիդ Մակլելլանը «Մարդու մոտիվացիան» աշխատության մեջ առանձնացնում է չորս հիմնական մոտիվացիոն համակարգեր՝ իշխանության, նվաճման կամ ձեռքբերումների, աֆֆիլյացիայի և տհաճառություններից խուսափելու: Որոշակի ընդհանրություններ կան՝ Դ. Մակլելլանի, Զ. Աւելինստենի տեսակետների և Աբրահամ Մալրուի պահանջմունքների հիերարխիկ բուրգի միջև: Ըստ Մալրուի, անձի մոտիվացիայի հիմքը կազմող պահանջմունքներն ունեն աստիճանակարգային բնույթ: Իրանց հիմքում ասորին մասում ընկած են ֆիզիոլոգիական, ապա անվտանգության և սիրո պահանջմունքները, իսկ վերին հատվածը կազմում են ինքնահատառման և ինքահրացման պահանջմունքները: Ըստ

<sup>2</sup>Մասնակցություն հանուն փոփոխությունների: Որակական հետազոտության արդյունքներ: (Փորձագիտական խմբի դեկավար Հովհաննիսյան և. Օրագի կողմինստոր, փորձագետ Պետրոսյան Ա.): Երևան, 2012:

<sup>3</sup>Իրականացվել են վեց ֆոկուս խոմք-թնարկումներ: Դասեր կազմակերպվել են ակուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված կիև գործիչների. բակուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված տղամարդ գործիչների, զ) հասարակական կազմակերպությունների առաջնորդների, դ) երիտասարդ հասարակական ակտիվիստների, ե) ՁԼՄ-ներիներկայացուցիչների, և զ) մարզային գործիչների մասնակցությամբ:

<sup>4</sup>Макклеллан Д. Мотивация человека. СПб., Питер, 2007, С. 258-262; 303-315; 372:

<sup>5</sup>St é u Atkinson J. Feather N. A theory of achievement motivations. N.Y., Wiley, 1966.

<sup>6</sup>St é u Maslow A. Motivations and Personality, N.Y, 1954, էջ 45:

որում. այդ պահանջմունքները կարող են փոխակերպիվ։ Փիգիոդիականը՝ կենսամակարդակի բարձրացման պահանջի. անվտանգության պահանջմունքը օրենքի և օրինականության հաստատման ջանքերի. սիրո և աֆֆիլացիայի պահանջմունքը՝ սոցիալական խմբին. շարժմանը կուսակցությանը կամ կառույցին անդամակցելու ձգտման. ինքնահաստատման պահանջմունքը՝ սոցիալական կարգավիճակի և հեղինակության բարձրացման. իսկ ինքնահրացման պահանջմունքը՝ բաղաքական ասպարեզում սեփական շահերի. համոզմունքների արտահայտման և իրականացման գործողությունների։ Փորձը ցույց է տալիս. որ նշված դրդապատճառներն ու գործոններն եավես պայմանավորում են մարդկանց նաև բաղաքական վարքն ու մասնակցության եղանակը։

Թե՛ հասարակական խմբերի. թե՛ անհատների ակտիվության և բաղաքական մասնակցության դրդապատճառների համակարգում տարբեր իրավիճակներում «ծանրության կենտրոնը» կարող է տեղաշարժվել։ Ամերիկացի սոցիոլոգ Ռոնալդ Ինգլեհարթի դիտարկմամբ կայուն, տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ բավարարված են մարդկանց նյութական պահանջմունքները, մոտիվացիոն համակարգում տեղի է ունենում տեղաշարժ դեպի պոստնյութական արժեքներ։

Որոշ հետազոտողներ ել նկատում են. որ շատերի համար բաղաքական կառույցներին անդամակցելը պայմանավորված է սեփական նյութական կեցություննը բարելավելու. որոշակի արտոնություններ ձեռք բերելու. սոցիալական կարգավիճակի բարձրացման, կարիերիստական նկրտումներով։ Մյուսների համար կ քաղաքականությամբ գրադարձնելով պայմանավորված է. որոշակի խմբի պատկանելով. հոգեբանական լարվածությունը. բարդ սոցիալական և քաղաքական իրավիճակներում անորոշության և անօգնականության զգացումը հաղթահարելու և պաշտպանություն գտնելու ձգտումով<sup>7</sup>:

<sup>7</sup>Տե՛ս Վասիլիկ Մ.Ա. Политология: учебник. М., 2006, էջ 219:

<sup>8</sup>Տե՛ս Ինգլեգարդ Р.Культурный сдвиг в эзролом постиндустриальном обществе. В книге: Новая постиндустриальная волна на Западе. Под ред. Иноzemцева В.Л., М., 1999, էջ 249-260:

<sup>9</sup>Бобков В., Браим И. Политология. 2003. <http://uchebnik-besplatno.com/uchebnik-teoriya-politiki/politicheskoe-uchastie-formyi-motivyi.html>.

Անհատի՝ գիտական գործունեությամբ զբաղվելու դրդապատճառներն հետագուստ մասնագետները բաժանում են երկու խմբի «Ներքին» և «արտաքին մոտիվացիաների»<sup>10</sup>: Ներքին մոտիվացիայի բաղադրիչներն են. տվյալ գործի նկատմամբ ունեցած հետաքրքրությունն ու սերը. աշխատանքի արդյունքներով հապարտանալու և հոգեկան բավարարվածություն ստանալու գործոնը, հասարակությանը պիտանի լինելու գիտակցումից ստացած բավականությունը: Արտաքին մոտիվացիան կազմում են հասարակական հեղինակության ձգտումը, փառասիրությունը. նյութական բարեկեցության հասնելու ցանկությունը, կարիերան. արտոնություններ ունենալը և այլն: Նոյն դասակարգումը կիրառելի է թերևս ցանկացած. այդ թվում՝ բաղաքական գործունեության դրդապատճառների նկատմամբ:

Վերջապես. կարելի է բաղաքականությամբ զբաղվելու դրդապատճառները բաժանել ևս երկու խմբի՝ **հերոնիստական-էգոիստական** (անձնական օգուտի, շահի, իշխանությունը շահադիտական նպատակներով գործածելու) և **ալտրոիստական** (ընդհանուրի շահերին ծառայելու, սեփական գիտելիքներն ու կարողությունները հասարակական առաջընթացին ծառայեցնելու) **մղումների:**

Որո՞նք են բաղաքական մասնակցության դրդապատճառները հայաստանյան գործիչների համար:

Վերլուծելով ֆոկուս խմբերի մասնակիցների գնահատականներն ու մեկնաբանությունները՝ Ազգային ժողովի պատգամավոր դառնալու հայաստանյան գործիչների ցանկության հիմքում նշված մոտիվացիոն հիմնական գործուները կարելի է բաժանել հինգ խմբի:

Առաջին խմբը կազմում են **անձնական, շահադիտական (հերոնիստական)** նկրտումները. անձնական օգուտի, իշխանությունը շահադիտական նպատակներով գործածելու, սեփական բիզնեսն ապահովությունը. նյութական կեցությունը բարեկալելու ցանկությունը:

Երկրորդ խմբը կազմում են **երկրին ու հասարակությանը օգտակար լինելու**. ծառացած խնդիրների լուծմանը նպաստելու և սոցիալ-տնտեսական. բարոյահոգեբանական իրավիճակը բարեփոխելու (ալտրոիստական) **ցանկությունները:**

Տե՛ս Պերերգուննայի սբորնիկ. «Творчество и жизненный путь ученого». Творческая личность в науке. М., 1988.

**Երբարդը ինքնահաստատման՝** մրցակցության և դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացնան ու դրա հետ կապված՝ հոգեկան բավարարվածություն ձեռք բերելու դրդապատճառն է:

**Չորրորդը ինքնադրսնորման՝** սեփական փորձի կարողությունների, մասնագիտական զիտելիքների ու հմտությունների իրացման ցանկությունն է Վերջապես, եխնգերորդ գործոնը ԱԺ պատգամավորության թևնկածուների համար կուսակցության որոշումն է:

Նշված դրդապատճառներից առաջին երեքն բատ կարևորության նույնանման տեսակարար կշռով, կազմում են բաղարական կարիքարայի հիմքում ընկած մոտիվացիոն գործոնների հիմնական խումբը: *Տես Այլուսակ 1-ը:*

**Այլուսակ 1.** Քսանական գործիչների՝ Ազգային ժողովի պատգամավոր դառնալու դրդապատճառների հարաբերակցությունն ըստ ֆոկուս խմբերի մասնակիցների գնահատականների

Մոտիվացիոն գործոններ	Տեսակարար կշիռը ֆոկուս խմբերի մասնակիցների գնահատականներում
Անձնության շահապլոտական դրդապատճառներ	27,2%
Երկիրն ու հասարակութանուն օգոտակար լինելու ցունդություն	27,2%
Բնահաստատման մղումներ	27,2%
Գիտելիքների ու հմտությունների իրացման, ինքնադրսնորման դրդապատճառներ	12,2%
Կուսակցության որոշում	6,2%

Հետազոտության ընթացքում ֆոկուս խմբերի մասնակիցներին առաջակել էր քննարկել ԱԺ պատգամավոր դառնալու տղամարդ և կին գործիչների մոտիվացիոն:

Կուսակցությունների համամասնական ընտրացուցակներու և ընդգրկված տղամարդիկ ավելի քննադատաբար են մոտենում ԱԺ պատգամավոր դառնալու տղամարդ գործիչների մոտիվացիոն համակարգի վերլուծությանը և ավելի «ջենովլմանակարի» կին

թեկնածուների դրդապատճառները դիտարկելիս<sup>11</sup>: Կին գործիչները ևս փոքր-ինչ ավելի քննադատաբար են տրամադրված տղամարդկանց քաղաքական պաշտոնները զբաղեցնելու դրդապատճառները քննարկելիս և համամատաբար ավելի վստահ են կանանց կառուցղական նկրտումների հարցում:

Թե՛ տղամարդ և թե՛ կին գործիչների՝ Ազգային ժողովում քաղաքական գործունեությամբ զբաղվելու դրդապատճառների մասին առավել սուր են արտահայտվում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու երիտասարդ ակտիվիստները: Այդ առումով տիպական է երիտասարդ ակտիվիստներից մեջի հետևյալ մեկնաբանությունը. «Հիմնականում փող դիմելու, իշխանությունից օգտվելու հարց է... Զեշին տոկոս են կազմում նրանք. ովքեր Ած են զնում որոշ բաններ դեպի լավը փոխելու համար: Մնացած մտնում են ուղղակի փող դիմելու, իշխանության հասնելու և կառավարող լինելու համար»:

Նմանատիպ քննադատական զնահատականներ են արձանագրվել նաև կին թեկնածուների առնչությամբ:

Այնուհետեւ, օգտապաշտական, շահադիտական նպատակներին գուգահեռ ու հավասարապես արձանագրվել են նաև կառուցղական, հանրութեա արժեքավոր դրդապատճառներ, որոնք հական դեր են խաղում հայաստանյան քաղաքական գործիչների ԱԺ պատգամավոր դատնալու ձգտումների համակարգում: Խորը Վերաբերում է հասարակության առջև ծառացած խնդիրների լուծմանը. սոցիալ-տնտեսական, քաղաքական, քարոյահոգեբանական իրավիճակի բարելավմանը ձեռնամոխ լինելու մղումներին: Օրինակ «Ես տարբերություն չեմ դնի կանանց և տղամարդկանց միջև: Աժ-ում հայտնվելու ցանկությունը առաջին հերթին պայմանագրության է քաղաքացիական և քաղաքական դիրքորոշմամբ, այն ցանկությամբ, որինսպի որոշակի դերակատարություն ունենան երկրի հասարակական-քաղաքական կյանքում» (Աժ քննորացուցակներում ընդգրկված տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս իսրի մասնակից):

Ըստ որում, կանայք կին գործիչների՝ Աժ պատգամավոր դատնալու

«Տրամադրության գործիչների ֆոկուս խմբի մասնակից. «Ճշմարտություն կատարողական մեջ որ Աժ զնալու տղամարդկանց դրդապատճառը ուսումնական է քարգավիճակի ձեռքբերումն է: Բայց նոյնը ասել հայ կնոշ առօդի մերժություն գումար գնում են Աժ ինքնաղուսնորվելու, կայանալու համար»:

դրդապատճառներն ավելի անկեղծ ու կառուցղական են համարում:

Անձնական շահադիտական նկրտումներին և հասարակության առջև ծառացած խնդիրների լուծմանն իրենց ներդրումը բերելու ցանկություններին հավասարաշափ կարևորվէլ է նաև ինքնահաստատման, մրցակցության և դժվարությունների հաղթահարման ձգումը: Ֆոկուս-խմբերի մասնակիցները, առանձնապես կին գործիչներն այդ դրդապատճառն առավել բնութագրական են համարում տղամարդկանց համար՝ հաճախ կապելով դա հանրային կարծիքում գոյություն ունեցող կարծրատիպի հետ. թէ տղամարդը պետք է լինի իշխողն ու որոշումներ կայացնողը:

**Ինքնահաստատման ձգումը**, թեև ավելի պակաս. քան տղամարդկանց դեպքում այնուհանդերձ. բնորոշ է համարվել նաև կանանց որոշակի խմբի համար. մասնավորապես իրենց կին գործիչների կարծիքով. «Կանանց մի խումբ էլ կարծես փորձում է տղամարդկանց ապացուցել. որ կարող են տղամարդկանց հետ հավասար ունենալ իշխանություն և ավելի ճկուն մտածելակերպ ունենալու շնորհիվ ավելի ճիշտ որոշումներ կայացնել. քան տղամարդիկ» (կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից):

Քաղաքական կարիերայի ձգումը պայմանավորող մոտիվացիոն գործոնների շարքում հաջորդ հորիզոնականը կազմում են **ինքնադրսանորման** սեփական փորձի. կարողությունների. մասնագիտական զիտելիքների ու հմտությունների իրացման ցանկությունները: Այս դրդապատճառը բնութագրական է. ինչպես տղամարդկանց. այնպես էլ կանանց որոշակի խմբերի: Սակայն. ըստ ֆոկուս-խմբերի մասնակիցների. կին գործիչների շրջանում այս մոտիվացիայի գործառնությունը փոքր-ինչ ավելի զգալի է. քան տղամարդկանց պարագայում:

**Աֆֆեկտացիայի** (մյուսների հետ լինելու) դրդապատճառը. որը տվյալ դեպքում դրսեռքվում է հավաքական շահի առաջնայնությամբ. կուսակցության որոշմամբ, առավել թույլ արտահայտվածն է. և գրեթե նույնն է ինչպես տղամարդ, այնպես էլ կին գործիչների պարագայում:

Ըստ որում, ուստիմասնակիրության արդյունքները վկայում են. որ այնուհանդերձ որոշակի տարբերություններ կան կին և տղամարդ գործիչների քաղաքական կարիերայի ձգուման մոտիվացիաներում: Ըստ ֆոկուս-խմբերի մասնակիցների գնահատականների տղամարդկանց մոտիվացիոն համակարգում առավել ընդգծված են

**շահադիտական-հեղոնիստական** և **ինքնահաստատման՝** մրցակցության, դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացման ձգությունները: Դրանց հաջորդում են **հասարակությանը օգտակար լինելու,** ծառացած խնդիրների լուծմանը նպաստելու, ապա նաև՝ սեփական փորձի, հնարավորությունների ու **մասնագիտական գիտելիքների իրացման-ներդրման ցանկությունները:**

ԱԺ պատգամավորության կին թեկնածուների մոտիվացիայում, ըստ ստացված կարծիքների, առաջնայինը **հասարակությանը օգտակար լինելու,** ծառացած խնդիրների լուծմանը նպաստելու ցանկությունն է: Դրան ըստ կարևորության հաջորդում են **ինքնահաստատման՝** մրցակցության, դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացման ձգությունները, սեփական փորձի, հնարավորությունների ու **մասնագիտական գիտելիքների իրացման-ներդրման ցանկությունները,** նոր միայն **շահադիտական-հեղոնիստական նկրությունները:** Թե՝ տղամարդ և բեւ կին գործիչների մոտիվացիոն համակարգում վերջին հորիզոնականը գրաղեցնում է **կուսակցության որոշումը:**

Այնուհետեւ, առավել իրատեսական է թվում ֆոկուս խմբերի այն մասնակիցների դիրքորոշումը, որոնց կարծիքով կին և տղամարդ գործիչների մոտիվացիաներում եական տարբերություններ չկան:

«Ամբողջ խնդիրը կանոնների մեջ է: Ով զայիս է, պիտի համապատասխանի կամ այս խաղի կանոններին, կամ դուրս մնա անկախ նրանից կին է, թե տղամարդ... (ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս-խմբի կին մասնակից):

ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածուների քաղաքական գործունեության մոտիվացիայի վերլուծությունը վերահաստատում է այն տեսակետը և այն վարկածը, որ օրենսդիր մարմանում կին պատգամավորների թվի ավելացումը կրերի սոցիալական խնդիրների, սոցիալապես անպահով խավերի, երեխաների և կանաց հիմնահարցերի նկատմամբ ուշադրության և հոգածության մակարդակի բարձրացման:

Կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված կին գործիչներն իրենց պատգամավորական գործունեությունը պատկերացնում են առավելապես այն

հանձնաժողովներում. որոնք զբաղվում են կրթության և երիտասարդության. սոցիալական ապահովության. առողջապահության. մայրության և մանկության. մարդու իրավունքների պաշտպանության. Լրիկայի հարցերով. միջազգային հարաբերություններով: Սոցիալապես անապահով խավերի. կանաց և երեխաների իրավունքների պաշտպանության. աղքատության հայցահարման. սոցիալական արդարության սկզբունքի ամրապնդման բնագավառներում են պատրաստվում ներկայացնել իրենց օրենսդրական նախաձեռնությունները կին գործիչները:

Տղամարդիկ նախընտրում են պետական իրավական հարցերի. ֆինանսավարկային և բյուջետային հարցերի տնտեսական գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովները և այդ ոլորտներում օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածք նվիրված է բաղարական գործունեության մոտիվացիայի վերլուծությանը: Վերլուծվում են բաղարական գործունեության սուտիվացիայի վերաբերյալ տարրեր հայեցակարգեր. ներկայացվում են գործուների դասակարգման նոր մոտեցումներ: Դրանց և ֆոկուս խմբերի մեթոդով դրականացված հետազոտության արդյունքների հիման վրա ուսումնասիրվել են ՀՀ ԱԺ ընտրություններին որպես պատգամավորության թեկնածու առաջադրվելու դրդապատճառները: Դրականացվել է կին և տղամարդ գործիչների մոտիվացիոն համակարգերի համեմատական վերլուծություն:

**Բանափի բառեր** ժողովրդավարություն բաղարական գործունեություն. բաղարական գործունեության մոտիվացիա. մոտիվացիոն գործուներ, պահանջմունքներ:

## МОТИВАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОГО УЧАСТИЯ МУЖЧИН И ЖЕНЩИН НА ПРИМЕРЕ ПАРЛАМЕНТСКИХ ВЫБОРОВ РА

Астхик Петросян  
Соискатель Института философии,  
социологии и права НАН РА

## РЕЗЮМЕ

Статья посвящена анализу мотивации политической деятельности. Анализируются разные концепции о мотивации политической деятельности, презентуются новые методы классификации факторов. На основе результатов исследования методом фокус-групповых дискуссий были рассмотрены мотивы баллотирования в Парламент РА. Был проведен сравнительный анализ мотивационных систем политических деятелей - женщин и мужчин.

**Ключевые слова:** демократия, политическая деятельность, мотивация политической деятельности, мотивационные факторы, потребности.

## MOTIVATION FEATURES OF MEN AND WOMEN POLITICAL PARTICIPATION ON THE EXAMPLE OF PARLIAMENTARY ELECTIONS IN RA

Petrosyan Astghik

*PhD student of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA*

The article is about the motivation of political activity. The article is analyzing various concepts about motivation of political activity and presenting new approaches of factors' classification. On the results of this and focus group discussions motivations of being elected as a RA parliament candidate have been explored. This article explored comparative analysis of men and women political figures' motivation system.

**Key words:** democracy, political activity, motivation of political activity, motivation factors, needs.